

# ԱՐՏԱԶԻՆ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ ՑՆՑՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎՐԱ

## ԷՄԻԼ ԶԱԼԻՆՅԱՆ

Տնտեսագիտական գրականության մեջ լայն տարածում ունի այն տեսակետը, ըստ որի՝ երկրների միասնացման (ինտեգրման) աստիճանի աճի հետ մի երկում տնտեսական զարգացումները սկսում են ենթարկվել այլ երկրների նշանակալի ազդեցությանը: Գործընկեր երկրներում պահանջարկի ցնցումները կապված են դրանցում եկամուտների մակարդակի տատանումների հետ: ՀՆԱ աճը մեծացնում է ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկը, իսկ նվազումը՝ կրճատում: Ուստի գործընկեր երկրներում ՀՆԱ տատանողականությունն ընդունվում է որպես արտահանման պահանջարկի համապատասխան փոփոխական:

Երկրների՝ արտաքին պահանջարկի ցնցումներին ենթարկվելու ռիսկը կարող է այնքան մեծ լինել, որքան ՀՆԱ տատանողականությունը գործընկեր երկրներում: Դա նաև կախված է տարբեր երկրներում ՀՆԱ փոփոխության ուղղությունից: Մի երկրում պահանջարկի՝ հակառակ ուղղությամբ փոփոխությունը կարող է հաշվեկշռել այլ երկրներում պահանջարկի փոփոխությունը՝ նվազեցնելով արտաքին ցնցումներին ենթարկվելու ռիսկը:

Գործընկեր երկրների տնտեսությունների ազդեցությունը երկրի տնտեսական աճի վրա փորձառական (էնպիրիկ) ուսումնասիրության են ենթարկել Արորան և Վամվակիդիսը<sup>1</sup>: Ավելի քան 100 երկրների՝ քառասուն տարվա տվյալների վրա հիմնված վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ գործընկեր երկրների տնտեսական աճի ազդեցությունն ուժեղ է նույնիսկ ոեգրեսիայի (հետընթաց) ժամանակահատվածում համաշխարհյին և տարածաշրջանային միտումները կառավարելիս:

Հակառակ տեսակետ են արտահայտել Անդերսոնը, Կվարկ ու Վահիդը: 37 զարգացած և զարգացող երկրների գործարարության պարբերաշրջանների ուսումնասիրության ընթացքում նրանք բացահայտել են, որ առավել քայլ տնտեսություն ունեցող երկրների և նրանց գլխավոր առևտրային գործընկեր երկրների գործարար պարբերաշրջանները համաժամանակացված (սինխրոնացված) են<sup>2</sup>: Սա ենթադրում է, որ զարգացող փոքր երկրները կարող են հասնել տնտեսական աճի առավել կայուն մակարդակի առևտրային բացվածության մեծացման դեպքում արդյունաբերապես

<sup>1</sup> Steu Arora V., Vamvakidis A., How much do trading partners matter for economic growth?, IMF staff papers, Vol. 52, No.1, 2005:

<sup>2</sup> Steu Anderson H., Kwark N. and Vahid F., Does International Trade Synchronise Business Cycles?, Department of Econometrics and Business Statistics, Monash University, 1999, էջ 17-18:

զարգացած երկրներում թողարկման ավելի ցածր տատանողականության հետևանքով:

Մեկ այլ ուսումնասիրության<sup>3</sup> մեջ Յանսենը, Լենոնը և Պիերմանտի-նին փորձել են գնահատել երկրների՝ օտարերկրյա պահանջարկի ցնցում-ներին Ենթարկվելու ռիսկը: Որպես օտարերկրյա պահանջարկի ցնցման չափման միջոց ընտրվել է գործընկեր երկրների ՀՆԱ տատանողականությունը՝ դրա աճի տեսայի միօրինակ (ստանդարտ) շեղումը: Նրանք բացահայտել են, որ այդ փոփոխականն ունի նշանակալի դրական ազդեցություն արտահանող երկրների ՀՆԱ տատանողականության (Վարիացիա) վրա: Բացի այդ, փոփոխականը բաժանելով տատանողականության և համացրվածքի (կովարիացիա) բաղադրիչների, ցույց են տվել, որ առևտրային գործընկեր երկրների գործարար պարբերաշրջանների միջև հարաբերակցությունը (կոռելյացիա) ավելի կարևոր է, քան առանձին առևտրային գործընկերների պարբերաշրջանների մեծությունը: Հետևաբար՝ աշխարհագրական բազմազան ցնցումը (դիվերսիֆիկացիա) արտաքին պահանջարկի ցնցումներին Ենթարկվելու ռիսկի մեծության որոշիչ է համարվում և պակաս կարևոր չէ, քան արտահանման ապրանքային բազմազան ցնցումը:


Այսպիսով՝ տնտեսական միասնացման խորացման հետևանքով արտաքին պահանջարկի ցնցումներին Ենթարկվելու ռիսկը կարող է կախված լինել երեք գործոնից՝

- արտահանման աշխարհագրական կառուցվածքից,
- առանձին երկրների ՀՆԱ տատանողականությունից,
- տարբեր գործընկեր երկրների միջև տատանումների հարաբերակցությունից:

Հայաստանի Հանրապետության առևտրային հիմնական գործընկեր երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, Գերմանիան, Բելգիան, Նիդեռլանդները, Վրաստանը, ԱՍԽ-ը, Իրանը: 2009 թվականին դրանց բաժինն է ընկնել Հայաստանի արտահանման 66.8 տոկոսը: Ավելին, մեր երկրի տասը խոշորագույն գործընկեր երկրների բաժինը արտահանման մեջ 2009 թվականին կազմել է 70.6 տոկոս<sup>4</sup>, ինչը 8 տոկոսային կետով ցածր է 2008 թվականի մակարդակից և շուրջ 10 տոկոսային կետով՝ 1997 թվականի մակարդակից (գծապատկեր 1):


<sup>3</sup> Stéphane Jansen M., Lennon C., Piermantini R., Exposure to External Country Specific Shocks and Income Volatility, Economic Research and Statistics Division, World Trade Organization, 2009,էջ 15:

<sup>4</sup> Աղյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները:



1997-2008 թթ. դրանց միջին ցուցանիշը կազմել է 82.4%: Արտահանման աշխարհագրական կենտրոնացվածության առավելագույն մակարդակը, ըստ Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի, 1999 թվականին եղել է 0.19 (գծապատկեր 2): Դա պայմանավորված էր Հայաստանի արտահանման մեջ Բելգիայի բարձր տեսակարար կշռով՝ 36.4%: Երկրորդ ամենաբարձր մակարդակը՝ 0.12, գրանցվել է 2003 թվականին, երբ Խորայելին և Բելգիային բաժին էր ընկել արտահանման համապատասխանաբար՝ 20.8 և 18.1 տոկոսը:

Գծապատկեր 2



Ընդհանուր առմամբ, արտահանման աշխարհագրական կենտրոնացվածության մակարդակը, ըստ Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի, նշված ժամանակահատվածում ունեցել է նվազման միտում: Դա գլխավորապես բացատրվում է ոչ թե նոր կայուն գործընկեր երկրների ավելացմամբ, հետևաբար՝ աշխարհագրական առավել բազմազանեցմամբ, այլ ՀՀ արտահանման մեջ ներառված տասը խոշորագույն գործընկեր երկրների տեսակարար կշիռների հարաբերական հավասարեցմամբ, քանզի կենտրո-

նացվածության մակարդակը, որպես այդ երկների մասնաբաժինների հանրագումար, 1997-2008 թվականներին տատանվել է 77-88 տոկոսի միջակայքում, և միայն 2009 թվականին այլ երկրների տեսակարար կշիռը կտրուկ աճել է՝ հասնելով շուրջ 30 տոկոսի՝ մինչ այդ առկա առավելագույն 23 տոկոսի համեմատությամբ։ Այդ երկրներից կարելի է առանձնացնել Բուլղարիան, Կանադան և Ղինաստանը՝ արտահանման համապատասխանաբար՝ 8.5%, 4.8% և 2.5% բաժիններով։

**Սույն հոդվածում Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա արտաքին պահանջարկի ազդեցության ուսումնասիրության համար ընտրվել են 2001-2009 թվականներին ՀՀ արտահանման մեջ միջին տեսակարար կշռով տասներկու խոշորագույն գործընկեր երկրներ՝ Բելգիա, Բուլղարիա, Ֆրանսիա, Գերմանիա, Վրաստան, Իրան, Իսրայել, Խորհրդային Միունիցիա, ԱՄՆ։ Ի տարբերություն վերոնշյալ գրականության մեջ արտաքին պահանջարկի էֆեկտի զնահատման համար կիրառված փոփոխականների՝ առևտրային գործընկեր երկրների տնտեսական աճի տեսայի միօրինակ շեղումների և առևտրային կշիռներով համացրվածքի՝ մշակել ենք գործարար պարբերաշրջանի համաժանանակության փոփոխական, որը հնարավորություն է տալիս շափելու Հայաստանի Հանրապետության և նրա գործընկեր երկրների գործարար պարբերաշրջանների միաժամանակությունը և տրեմուային տնտեսական աճի շուրջ տատանողականության մեծությունները.**

$$BCS_{it} = \sum_j^n w_{ijt} [GAP_{it} * GAP_{jt}], \quad w_{ijt} = \frac{Exp_{ijt}}{Exp_{it}}$$

որտեղ՝ *BCS*-ը *i*-ոյ երկրի և գործընկեր երկրների գործարար պարբերաշրջանների համաժամանակության աստիճանն է, իսկ *GAP* փոփոխականը ցույց է տալիս երկրների՝ հաստատուն գներով համախառն ներքին արդյունքների փաստացի արժեքների<sup>5</sup> և տրենդային արժեքների տարբերությունը: Հետազոտվող երկրների համախառն ներքին արդյունքի ցուցանիշների՝ տրենդային և պարբերաշրջանային բաղադրատարերի բաժանման համար կիրառել ենք *Հոդրիկ-Պրեսկոտի* ֆիլտրը, իսկ փաստացի և տրենդային արժեքների միջև ճեղվածքների արժեքները միևնույն մասշտաբի բերելու համար ստանդարտացրել ենք<sup>6</sup>: Այնուհետև Հայաստանի Հանրապետության և գործընկեր երկրների ճեղվածքի փոփոխականների արտադրյալը կշռել ենք առանձին երկրների՝ Հայաստանի արտահանման մեջ ունեցած տեսակարար կշիռներով:

ՀՆԱ փաստացի մեծությունների՝ տրենդային մեծությունների գերազանցման դեպքում *GAP* փոփոխականներն ունենում են դրական արժեք

<sup>5</sup> Արդյունք՝ IMF World Economic Outlook, 2010, April, Database:



<sup>6</sup> Ստանդարտացումն իրականացվել է հետևյալ եղանակով՝  $\frac{x_i - \bar{x}}{\sigma_x}$ , որտեղ՝  $x_i$ -ն

մաստացի մեծությունն է,  $\bar{X}$ -ը՝ միջին մեծությունը,  $\sigma_x$ -ը՝ ստանդարտ շեղումը:

(*GAP>0*), հակառակ դեպքում՝ բացասական (*GAP<0*): Հետևաբար՝ Հայաստանի և նրա գործընկեր Երկրների *GAP* փոփոխականների զույգ առ զույգ արտադրյալների դրական արժեքը վկայում է գործարար պարբերաշրջանների համաժամանակության, իսկ բացասական արժեքը՝ անհամաժամանակության (ասինսրոնություն) մասին: Նոյն տրամաբանությամբ *BCS* փոփոխականի դրական արժեքը նշանակում է դիտարկվող և գործընկեր Երկրների գործարար պարբերաշրջանների համաժամանակություն, իսկ բացասական արժեքը՝ դրա բացակայություն:


Գործարար պարբերաշրջանային բաղադրատարերի վերլուծությունը և *BCS* փոփոխականի հաշվարկները բացահայտել են Հայաստանի և ԱՊՀ գործընկեր Երկրների, Բուլղարիայի ու Իրանի գործարար պարբերաշրջանների համաժամանակության բարձր աստիճանը, իսկ հետազոտված արդյունաբերապես զարգացած Երկրների պարագայում՝ առավելապես անհամաժամանակությունը: Տվյալ Երկու խումբ Երկրների *BCS* փոփոխականների շարժնբացն անփոփած է գծապատկեր 3-ում՝ համատեղված ՀՀ տնտեսական աճի տատանողականության հետ: Վերլուծության այսպիսի եղանակը հնարավորություն է տալիս փաթեթային մոտեցում ցուցաբերելու գործընկեր Երկրներին: Նշված մոտեցման տեսական սկզբունքներին համապատասխան՝ փաթեթում ընդգրկված ակտիվների՝ միմյանց նկատմամբ ունեցած բացասական համացրվածքն ապահովում է բազմազանեցման բարձր աստիճան և նկամտաբերության փոքր տատանողականություն:

**Գծապատկեր 3**




1993-2005 թթ. ընթացքում զարգացած տնտեսությամբ «փաթեթային» գործընկեր երկրների և Հայաստանի Հանրապետության հարաբերակցությունը բացասական է՝ գործարար պարբերաշրջանների անհամաժանակություն, երբ զարգացած երկրներում ՀՆԱ հնարավոր մակարդակը գերազանցող փաստացի մակարդակին համապատասխանել է Հայաստանի ՀՆԱ հնարավոր մակարդակից հետ մնացող փաստացի մակարդակ, կամ ընդհակառակը: ԱՊՀ գործընկեր երկրների, Իրանի և Բուլղարիայի պարզագույն առկա է դրական կախվածություն: 2005 թվականից հետո գործարար պարբերաշրջանների համաժանակություն դրսևրվել է թե՝ զարգացած, թե՝ ԱՊՀ երկրների, Իրանի ու Բուլղարիայի դեպքում: Հայաստանի և զարգացած գործընկեր երկրների համախառն ներքին արդյունքի պարբերաշրջանային բաղադրատարրերի հարաբերակցությունը 2005 թվականի -0.79-ից 2009 թվականին հասել է 0.99-ի: Դրան նպաստել է ՀՀ արտահանման կառուցվածքում նրանց բաժնի աճը, որը 1993 թվականին կազմում էր 14%, իսկ 2009 թվականին՝ 41%: 1999 թվականին այս ցուցանիշը գերազանցեց ԱՊՀ գործընկեր երկրների բաժինը: Այդ գերազանցությունը նրանք պահպանում են մինչև օրս: 1999-2009 թվականներին արտահանման կառուցվածքում ԵՄ երկրների և ԱՄՆ-ի բաժինը միջինում կազմում էր 52%, իսկ ԱՊՀ երկրներինը և Բուլղարիայինը՝ 29.4%:

Այսպիսով՝ մինչև 2005 թվականը կարող ենք խոսել առավել բազմազանեցված փաթեթ ունեցող երկրների, իսկ 2005 թվականից հետո՝ բազմազանեցման մակարդակի նվազման մասին: Սա նշանակում է 1993-1996 թվականների համեմատությամբ տնտեսական աճի անկայունության մակարդակի նվազում մինչև 2005 թվականը: 1997-2000 և 2001-2004 թվականների ՀՆԱ աճի տեմպի միօրինակ շեղումները համապատասխանաբար կազմել են 1.98 և 2.10՝ 1993-1996 ժամանակահատվածի 7.45-ի համեմատությամբ: Ավելին, նշված ժամանակաշրջանում տնտեսական աճի տեմպերը կայունացել են նաև ԱՊՀ գործընկեր երկրներում, Բուլղարիայում, Իրանում, ինչպես նաև զարգացած երկրներում՝ բացառությամբ 2001-2003 թվականների, որոնք տնտեսական անկման տարիներ էին ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում: Այնուամենայնիվ, արդեն 2006 թվականից սկսած, պայմանավորված այդ երկու խումբ գործընկեր երկրների հետ Հայաստանի տնտեսության գործարար պարբերաշրջանների համաժանակությամբ, ինչպես նաև առանձին երկրներից յուրաքանչյուրում մակրոտնտեսական անկայունության աճով, մեր երկրում արձանագրվել է տնտեսական աճի տեմպի բարձր տատանողականություն, որը հավասար էր 12.64-ի:



■ ԱՊՀ գործընկեր երկրների ՀՆԱ պարբերաշրջան. բաղադրատարրերի գումար  
— ԱՊՀ. Բուլղարիա և Իրան <<արտահանում



■ Զարգացած երկրների ՀՆԱ պարբերաշրջան. բաղադրատարրերի գումար  
ԾՄ և Կոմիկ և ԱՄՆ <<արտահանում


Հայաստանի արտահանումը, ՀՆԱ աճի տեմպի տատանողականության պես, ուսումնասիրվող ժամանակաշրջանում դրսենորել է աճող տատանողականություն: Արտահանման հնգամյա «սողացող» տատանողականությունը 2009 թվականին 1.5 անգամ գերազանցել է 2005 թվականի և մոտ 2 անգամ՝ 2002 թվականի համապատասխան ցուցանիշները: 1994-2009 թթ. արտաքին պահանջարկի ցնցման 1% փոփոխությունը համգեցրել է տրենդի նկատմամբ արտահանման միջինում 9.4% փոփոխության, թեև վերջինս նույնկերպ չի դրսերդվել ՀՀ առևտրային գործընկերների շրջանում: Գերմանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Նիդեռլանդների, Խտալիայի, Խորայելի և ԱՄՆ-ի պահանջարկի ցնցումների ու արտահանման միջև դրական հարաբերակցություն է գրանցվել միայն վերջին հինգ տարիների ընթացքում: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով 2009 թվականին այդ երկրներ արտահանման ծավալը նվազել է 41.3%-ով՝ Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան, Բուլղարիա և Իրան արտահանման ծավալի 33%-ով կրճատման դիմաց<sup>7</sup>: Ամենամեծ կրճատումներ ունեցել են «Տրիկոտաժե հազուտ և հազուտի պարագաներ», «Հանքար, խարամ և մոխիր», «Սև մետաղներ», «Բնական և արհես-

<sup>7</sup> 2009 թվականին ՀՀ արտահանման ընդհանուր ծավալը 2008 թվականի համեմատությամբ կրճատվել է 32.8%-ով:

տական մարզարիտ, քանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, քանկարժեք մետաղներ» ապրանքախմբերը. համապատասխանարար՝ 84%, 89%, 59% և 58%, իսկ ԱՊՀ երկրներ, Բուլղարիա և Իրան արտահանումը ցուցաբերել է հարաբերական դիմադրողականություն և ճկունություն արտաքին պահանջարկի անկման նկատմամբ: Ավելին, որոշ ապրանքախմբերի արտահաննան ծավալներն աճել են՝ «Ռուսիա մրգեր և ընկույզներ», «Հանքաքար և խարամ», «Լոկոմոտիվներ», տրամվայներ և դրանց մասեր», «Հանքային վառելանյութ, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր»: ԵՄ երկրներ արտահաննան ծավալների ավելի մեծ չափով նվազման վրա արտաքին պահանջարկի ցնցումներից ոչ պակաս ազդեցություն է ունեցել նաև տրանսպորտային ծախսերի աճը, որը հաստատվել է գնահատված ներքոնշյալ գծային կախվածությամբ.

$$X_t = 6.304341125 + 9.39112353 * DM_t - 5.497334454 * CIF/FOB_t$$

**Գծապատկեր 5**



Սովորաբար տրանսպորտային ծախսերի աճի պատճառով տեղի է ունենում առավել հեռու երկրների հետ առևտրային հոսքերի ինտենսիվության նվազում: Հայաստանի պարագայում, ինչպես ցույց է տալիս գծապատկեր 5-ը, 2000 թվականից մինչև 2005 թվականը տրանսպորտային ծախսերն արտացոլող CIF/FOB գործակիցը նվազել է մոտ 7%-ով<sup>8</sup>, ինչի արդյունքում դիտվել է արտաքին առևտրային հոսքերի վերակողմնորոշում դեպի արդյունաբերապես զարգացած ՀՀ գործնկեր երկրներ: Դրանց բաժինը ՀՀ արտահաննան մեջ իր առավելագույն մակարդակին է հասել 2005 թվականին՝ 62.8%, մինչդեռ խոշոր մյուս գործնկեր երկրների բաժինը նվազել է մինչև 21.4%-ը: Այնուհանդերձ, դրան հաջորդող տարիներին տեղի է ունեցել այդ միտման շրջադարձ. CIF/FOB գործակիցն աճել է մինչև 3.5%-ով, իսկ Գերմանիայի, Բելգիայի, Նիդեռլանդների, ԱՄՆ-ի, Իսրայելի, Իտալիայի ընդհանուր մասնաբաժինն աստիճանաբար նվազել է մինչև 41.4%-ը:

<sup>8</sup> 2000 թ. CIF/FOB-ը հավասար էր 1.21-ի, իսկ 2005 թ.՝ 1.13-ի:

**ЭМИЛЬ ЗАЛИНЯН – Влияние внешних шоков спроса на экономический рост и экспорт Республики Армения.**- Углубление интеграции стран ведет к большей подверженности их экономик экономическому развитию торговых партнеров, в особенности шокам спроса. Последнее связано с колебаниями национального дохода. Передача шоков дохода между странами зависит от географической диверсификации внешнеэкономических связей, и чем меньше географическая диверсификация, тем больше влияние шоков дохода, исходящих из единой страны. Республика Армения, являясь открытой экономикой, также подвергалась колебаниям национального дохода и соответственно шокам спроса в экономике стран главных торговых партнеров. В течении последнего десятилетия географическая диверсификация армянского экспорта снизилась, подразумевая меньшую волатильность ВНП. Но повреки этой логике 2005-2009гг. были периодом большей волатильности доходов. Разработка индикатора синхронности деловых циклов и оценка зависимости неустойчивости экономического роста и экспорта от степени синхронности между циклами Армении и ее торговых партнеров выявили растущую синхронность деловых циклов, что делает портфель торговых партнеров менее диверсифицированным и вызывает неустойчивость экономического роста и экспорта.

**EMIL ZALINYAN – The Impact of external demand shocks on economic growth and exports of the RA.**- Greater economic integration of countries leads to greater exposure of their economies to economic developments in partner countries, particularly to demand shocks. The latter is related to national income fluctuations. The transmission of income shocks across countries depends on geographic diversification, and the less the geographic diversification the greater is the impact of demand shocks arising from any single country. The Republic of Armenia, being an open economy, has also been subject to income fluctuations and consequently to demand shocks in its main trade partners. Over the past decade geographic concentration of Armenia's export has decreased suggesting less GDP volatility. But contrary to this logic the period of 2005-2009 was one of greater income volatility. Construction of the business cycle synchronization indicator and estimation of the dependence of growth volatility and exports on the degree of synchronization between Armenia and its trade partners revealed increasing synchronization of business cycles making the portfolio of trade partners less diversified and entailing greater growth and export volatility.